Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, 17-20 հոկտեմբեր, 2023 թվական

4. Հրավիրող կողմը

Միջազգային գիտատեխնիկական կենտրոն (ՄԳՏԿ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի ռազմավարական ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքային խմբի հանդիպմանը

6. Քննարկված թեմաները

1. ՄԳՏԿ ռազմավարական ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքների քննարկումը,
2. ՄԳՏԿ 2023 թվականի բյուջեի կատարողականը,
3. ՄԳՏԿ 2024 թվականի բյուջեն, աշխատանքային պլանի քննարկումը և հաստատումը,
4. ՄԳՏԿ կառավարիչների խորհրդի 77-րդ նիստի օրակարգի նախագիծը,
5. ՄԳՏԿ 30 ամյակին նվիրված միջոցառումների անցկացումը,
6. «ԷՔՍՊՈ 2025 Օսակա, Կանսայ, Ճապոնիա» ցուցահանդեսին ՄԳՏԿ մասնակցությունը,
7. Այլ ընթացիկ հարցեր:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Հանդիպման ընթացքում քննարկվել են՝ մինչև 2030 թվականի ՄԳՏԿ գործունեության գործառնական նպատակներն ու խնդիրները, ՄԳՏԿ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի մեդիա հարթակներում լուսաբանմանն ուղղված քայլերը, ՄԳՏԿ ֆինանսական ծավալների ավելացման և նոր միջոցների ներգրավման հնարավորությունները, ՄԳՏԿ շրջանակում գիտատեխնիկական ոլորտում նոր

համագործակցությունների ձևավորումը: Ներկայացվել է նաև ՄԳՏԿ Հաղորդակցության ռազմավարական պլանը, որը միտված է ՄԳՏԿ գործունեության հանրայնացմանը և ՄԳՏԿ գործունեության վերաբերյալ ապատեղեկատվության տարածման դեմ համապատասխան քայլերի ձեռնարկմանը: Անդրադարձ է կատարվել ՄԳՏԿ անդամակցող երկրների աշխարհագրության ընդլայնմանը և շարունակվել է մի շարք երկրներից ստացված ՄԳՏԿ անդամակցության հայտերի քննարկումը: Քննարկվել են ղազախստանյան կողմի հետ կապված մի շարք կազմակերպչական բնույթի խնդիրներ, մասնավորապես, կառավարության համաձայնության տրամադրման ժամկետի երկարաձգումը, անդամավճարի չվճարման հարցը և ՄԳՏԿ գրասենյակի վարձակալության արժեքի ավելացման խնդիրը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Քննարկված հարցերի արդյունքում ձևավորվել է ՄՏԳԿ կառավարիչների խորհրդի 77-րդ նիստի օրակարգի նախագիծը: Քննարկվել է ՄԳՏԿ 30 ամյակին նվիրված միջոցառումների նախագիծը, որը կուղարկվի անդամ-պետություններին հետագա լրամշակումների համար:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Մասնակիցները կշարունակեն աշխատանքները ՄԳՏԿ ընձեռած հնարավորությունների շրջանակում, ինչպես աշխատանքային խբերի, այնպես էլ կառավարիչների խորհրդի կազմերում: Քննարկումների ժամանակ Ս. Հայոցյանն առաջարկել է դիտարկել ՄԳՏԿ կենտրոնական գրասենյակը Ղազախստանից Հայաստան տեղափոխելու հարցը: Վերջինիս վերաբերյալ ԵՄ և ԱՄՆ պատվիրակները հայտնել են, որ առաջարկը կքննարկեն իրենց համապատասխան կառույցներում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Սարգիս Հայոցյան 25.10.2023թ.